

ԳՐԻԳՈՐ ՕՇԱԿԱՆՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Շ. Լ. ՆԱԶԱՐԱՅԱՆ

Գր. Օշականցին XVIII դարի արևելահայ սակավաթիվ բանաստեղծների մեկն է, զգայուն ու նրբաճաշակ մի տաղերգու՝ նա ծնվել է 1757 թ. Օշականում: Ծնողները իրենց անդրանիկ որդուն՝ Գրիգորին, յոթ տարի հայրենի տանը խնամելուց հետո տանում են Էջմիածին: Գրիգորը այստեղ սովորում է Սիմեոն Երևանցու նոր բացած ժառանգավորաց դպրոցում: Ուշիմ ու աչքաբաց պատանին, արտակարգ ընդունակությամբ ու վարքով իր վրա է հրավիրում քարձրաստիճան հոգևորականության և անձամբ Սիմեոն կաթողիկոսի ուշադրությունը: «Գրիգոր սա յաւուրս Սիմէօնի սրբաղան կաթողիկոսին,—գրում է ժամանակակից կենսագիրը,—որոյ տեսեալ զբարեսուն վարս երանելի մականն Գրիգորի, ձեռնադրեաց զնա ի կարգ կուսակրօն քահանայութեան և վարդապետական աստիճանաւ ճոխացեալ ի տղայական հասակի, որ և լցեալ եղև աստուածային շնորհիւ իմաստութեամբ և գիտութեամբ»²: Հատկապես ճարտասանության մեջ Գր. Օշականցին ցույաբերում է բացառիկ ձիրք և շնորհալիություն: Երիտասարդ Գր. Օշականցուն Ղուկաս կաթողիկոսը շնորհում է արքեպիսկոպոսության աստիճան և նվիրակության պաշտոնով ուղարկում Հայաստանի զանազան վայրերը: Այդ տեղի է ունենում 1795—1799 թթ.: Գր. Օշականցու կյանքի վերջին շրջանում: ինչդ ժամանակամիջոցում Գր. Օշականցին շրջում է Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գավառները, այցելում է նշանավոր վանքերն ու եկեղեցիները, բերդերն ու ավերակները, որոնք շատ խոր ազդեցություն են գործում նրա վրա: Շրջագայությունների ընթացքում Գր. Օշականցին մի կողմից կատարում է նվիրակի իր պարտականությունները, մյուս կողմից՝ ուսումնասիրում է հայրենի պատմական հուշարձանները և այդ տպավորությունների տակ տխրաթախիժ բանաստեղծություններ գրում: Նա այցելում է Անու ավերակները և հենց այդ ժամանակ է, որ գրում է Անիին նվիրված իր ողբը՝ «Ողբ նորին Գրիգորի ի վերայ Անի քաղաքին, ի ժամանակի, մինչ ել նա ի զննին աշխարհի այնորիկ և ճեմս առեալ ի վերայ պարսպացն, նորին զգնայր ընդ երկայնութիւն և ընդ լայնութիւն շինուածոյն, հայեցեալ յաւերակս յապարանից և եկեղեցեայց, արտասուեաց և ասէ...»³: Այս շրջագայությունների ժամանակ Գր. Օշականցին Կարինի, Եկեղյաց, Բաբերդի,

¹ Գր. Օշականցու ստեղծագործությամբ զրադվելու մղումը մենք ստացել ենք, երբ տպագրության էինք պատրաստում «Հովհաննես Կարենցու «Ճաղարանը» Վերջերս, սակայն, մեզ հայտնի դարձավ, որ Տ. Հ. Ոսկյանը «Հանդես ամսօրյա»-ում հրատարակում է Գր. Օշականցու երկերը: Այդ պատճառով, ահա, մենք նպատակահարմար գտանք բավարարվել սույն հոդվածի հրապարակումով:

² ՀՍՍՌ մինիստրների սովետին առնթոյն Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ — Մատենադարան, ձեռ. № 6682, թերթ 65ա:

³ Մատենադարան, ձեռ. № 6682, թերթ 11բ:

Քասենի, Մուշի և շատ այլ գավառների, քաղաքների ու ավանների եկեղեցիների պատերի վրա հիշատակագրում է ոտանավոր արձանագրություններ:

Գր. Օշականցին վախճանվում է հենց այդ շրջագայությունների ժամանակ՝ Կարինում: 1799 թ. դեկտեմբերին, նոր նա Թիումորա նահանգում ավարտում է իր գործերը և շտապում է Մուշ՝ Գլակա վանքը ուխտի, որտեղից նա արդեն պիտի վերադառնար էջմիածին, Հերթ գյուղում հիվանդանում է ժանտաղավով և ստիպված, կրկին վերադառնում է Կարին: Զգույով իր վիճակի անհուսալիությունը, Գր. Օշականցին հրավիրում է իր մոտ բանաստեղծ և ուսուցիչ Հովհաննես Կարենցուն, որի հետ մտերմացել էր նա Կարնո գավառում իր կատարած պտույտների ժամանակ, և խնդրում է նրան զրել իր կտակը:

Գր. Օշականցին վախճանվում է 42 տարեկան հասակում, 1799 թ. դեկտեմբերի 29-ին, Կարինում և թաղվում այնտեղ՝ «Բ կարգս զերեզմանին վարդապետաց»:

Գր. Օշականցու ստեղծագործական ժառանգությունը ամբողջությամբ չի հասել մեզ. սակայն բարերախոտարար նրա երգերը զանազան ձևագրերում ցրված լինելու հետ մեկտեղ, պահպանվել են նաև առանձին զրչադրերով: Մեզ ծանոթ են այդպիսի չորս ձևագրեր. դրանցից երկուսը գտնվում է Երևանի Մատենադարանում՝ № 6682, № 7672, իսկ երկուսը՝ Վիեննայի Մատենադարանում՝ № 884, 885: Այս ձևագրերի համար նախնական հիմք է հանդիսացել Գր. Օշականցու ինքնագիր «Տաղարանը», որը մեզ չի հասել, և որը հեղինակը հրատարակության է պատրաստել էջմիածնում՝ 1787 թվականին:

«Տաղարան վայելուչ և զեղեցիկ

Յոմերսկան երգարանութեամբ շարադրեալ տեառն Գրիգորի տրուպ վարդապետի, որ ի զեղջէ Օշականայ, նստարանի մեծին Մեսրոբայ հայոց թարգմանչի: Առ դրան լուսազարդ և աստուածորնկալ մայր աթոռոյ սրբոյ էջմիածնի, ի հայրապետութեան Տեառն Ղուկասու երջանկազարդ և քրիստոսապսակ կաթողիկոսին ամենայն հայոց...
Ի թուոջ փրկչին 1787 և ի թուին հայոց ՌՄԼԶ»⁴:

Այս տաղարանը, սակայն՝ որ ընդգրկում է հեղինակի միայն տաղերը, շուրջ երկու տասնյակի չափ, չի տպագրվելու Հետագայում, Գր. Օշականցու մահից հետո, նրա կտակադիրը՝ բանաստեղծ և ուսուցիչ Հովհաննես Կարենցին, որը նաև նշանավոր գրիչ էր, իր ձեռքի տակ ունենալով վերոհիշյալ «Տաղարանը», ինչպես նաև հանգուցյալի գրչին պատկանող 1787 թվականից հետո գրված այլ երգեր, ի մի է բերում, ամբողջացնում, վերստեղծելով Գր. Օշականցու երգերի մի նոր ձևագիր ժողովածու՝ բաղկացած երեք մասից՝ ա) Տաղեր, բ) Ուտանավոր հիշատակարաններ, գ) Տեսիլներ: «Ուստի,— գրում է Հովհաննես Կարենցին այդ մասին,— ի հեքս ամենայնի սիրահարեալ իմաստալի բանից և շնորհալոյս գրուածոց հոգէշնորհ ըաբունոյս երջանիկ Գրիգորիս արքեպիսկոպոսիս և աստուածարան վարդապետիս, զորոյ շարադրեալ տաղարանն և

⁴ Նույն տեղում, թերթ 1ր:

զերպսն ևս ոստանաւորսն, ընդ նոսին և զհիահրաշ տեսիլն, աշխատասիրեալս
 չրեցի ի մխիթարութիւն սիրաւառ սրտի իմում և ի սփոփումն համայն բանա-
 սիրաց, և մանաւանդ երջանիկ և հոգելոյս վարդապետին այնորիկ: Ուրեմն
 խնդրեմ ի հանդիպողացդ յիշել ի մաքրափայլ աղօթող ձեր՝ զիս անպիտան
 նօտարս Յօհաննէս...»⁵: Ձեռագիր ժողովածուի վերջում, Հովհ. Կարենցին ավե-
 յացնում է նաև Գր. Օշականցու վարքը՝ «Յիշատակարան վստի ծննդեան և աս-
 տուածահաճոյ վարուց և երջանիկ վախճանման առն աստուծոյ, տեառն Գրի-
 ցորի արքեպիսկոպոսի և շնորհալոյս վարդապետի»⁶, որ գրում է ինքր այդ օրե-
 րին, և որը միակ աղբյուրն է Գր. Օշականցու մասին: Պահպանվում է Հովհ.
 Կարենցու հիշատակարանը նաև «Տաղարանի» ընդօրինակման ժամանակի
 մասին՝ «Ես ամենանուաստ Յօհաննէս չպէտ նօտարս գրեցի զսոյն տետրակս
 ի ՌՄԽԹ Թուջ և յայրիլի Ժէ: Ի քաղաքս Կարին, ի վայելումն տիրացու Յօհան-
 նիսեան Պողոսին»⁷: Այսպիսով, Հովհ. Կարենցին, Գր. Օշականցու կտակադիրն
 ու վարքագիրը, վերջինիս մահից հետո, ի սեր նրա հիշատակի, ձևանամուխ է
 լինում նրա երգրի հավաքման ու ընդօրինակման գործին (որքան որ թույլ են
 տալիս իր տրամագրութեան տակ եղած նյութերը) և այդ աշխատանքներն
 ավարտում է Գր. Օշականցու մահից երեք և կես ամիս հետո՝ 1800 թ. ապրիլի
 17-ին: Դժբախտաբար, Հովհ. Կարենցու այս ձեռագրի ինքնագիրը նույնպես մեզ
 չի հասել: Վերևում հիշատակված շորս ձեռագրերը գոյացել են Հովհ. Կարենցու
 այս գրչագրից: Նրանցից առաջինը՝ № 7672, որը թերի է (պարունակում է Գր.
 Օշականցու տաղերի մի մասը, այլ հեղինակների տաղերի հետ միասին) ընդօ-
 րինակված է Կարինում՝ 1808 թ.: Բարսեղ գրչի կողմից. «Յետեալ և ամենա-
 նուաստ Բարսեղ չպետ նօտարս գրեցի զսոյն տետրակս ի ՌՄՍԷ Թուջս և ապ-
 րիլի ԺԸ, ի քաղաքս (Կարին)»... ի վայելումն տիրացու Խաչերեսի տիրացու
 Բարսեղին»⁸: Երկրորդ՝ № 6682 ձեռագիրը ընդօրինակված է 1820 թ., դարձ-
 յալ Կարինում՝ ոմն Համբարձում գրչի կողմից՝ «Արդենիս օրինակեալ եղև ի
 Կարին քաղաքիս յեկեղեցւոյ պանդոկի վարժարանիս և ձեռամբ Մովսէս վար-
 ժապետի աշակերտ, խակակիթ մահտեսի Համբարձումիս»⁹: Իսկ երրորդ և
 չորրորդ ձեռագրերը՝ № № 884, 885, որոնք գտնվում են Վիեննայում, գրիչների
 հիշատակարաններ չունեն: Գր. Օշականցու առանձին տաղեր, բացի վերոհիշ-
 յալ ձեռագրերից, կան նաև Երևանի Մատենադարանի № № 4335, 5066, 6557,
 7009, 7689, 7702, 7712, 7716, 8540, 8655, 8736, 8764 և այլ ձեռագրերում:

Գր. Օշականցուց մեզ հայտնի են շուրջ 20 բանաստեղծություններ, 23
 ոտանավոր արձանագրություններ և 3 տեսիլ: Այս բոլորից անցյալում տպա-
 ցրվել է միայն երկու երգ: Ն. Ակինյանի վկայությամբ Տրդատ Պալյանը հրա-
 տարակութեան է տպարաստել Գր. Օշականցու «Տեսիլները», որոնց տպագրու-
 թյունը, սակայն, չի իրականացել¹⁰: Դ. ք. Աղանյանցը անցյալ դարի 80-ական
 թթ. էջմիածնի Մատենադարանում աշխատելիս 23 ձեռագիր տաղարանների
 մեջ հանդիպում է Գր. Օշականցու երգերի մի գրչագրի: «Արձագանք»-ի էջերում
 տպագրելով Օշականցու «1^ի ցոլանայր շողն արեւոյն...» և «Ահաւասիկ վարձք

⁵ Նույն տեղում, ձեռ. № 6682, Թերթ 66ր:

⁶ Նույն տեղում, Թերթ 64ր:

⁷ Ձեռ. № 7672, Թերթ 15ա:

⁸ Նույն տեղում:

⁹ Ձեռ. № 6682, Թերթ 1բ:

¹⁰ Ն. Ակինյան, Տրդատ եպիսկոպոս Պալյան, «Հանդես ամսօրյա», 1923, էջ 557:

մշակաց» սկզբնատողերով երգերը, նա գրում է, «Ցանկալի է, որ այս դիրքում ամբողջովին լույս տեսնի, բայց քանի որ այսօր այդ դժվար է, և լրագրի էջերն անհարմար... ուստի մի ճաշակ տալու համար նրա բանաստեղծական քանքարի մասին, նրա շափարհրական գրվածքների լեզվի, բառերի սկզբնավորություն, ոտքի և չափի ներդաշնակություն, էվելյանների ազդեցություն վրա»¹¹։

Հետագայում՝ 1962 թ., Երևանի Մատենադարանի կողմից հրատարակված Հովհաննես Կարենցու «Տաղարանի» առաջարանում, էջ 9—11, խոսվում է նաև Գր. Օշականցու այս «Տաղարանի» մասին, որոշ քաղվածքներ բերվում են նաև նրա «վարքից»։ Այնուհետև, 1963 թ. հ. Շ. Ոսկյանը հրատարակում է Վիեննայի Մատենադարանի հայերեն ձեռագրերի ցուցակը, ուր մանրամասն նկարագրում է Գր. Օշականցու երկերը պարունակող ձեռագրերը (N № 884, 885, 1042, 1090) և «Հանդես ամսօրյայում» մաս առ մաս հրատարակում նրա երգերը¹²։ Շ. Ոսկյանը տաղերի բնագրերի համար օգտագործում է Վիեննայի վերահիշյալ և Երևանի Մատենադարանի (Հովհ. Կարենցու «Տաղարանում» մատնանշված)՝ N № 6682 և 7672 ձեռագրերը։ Տաղերի բնագրին առաջնորդող հոդվածում հ. Շ. Ոսկյանը բնութագրում է Գր. Օշականցու կրոնական-եկեղեցական գործունեությունը, գնահատում է Հովհ. Կարենցու գրած վարքը՝ քաղվածքներ բերելով նրանից։

Իր ստեղծագործական երախայրիքը, երգերի առաջին գիրքը՝ «Տաղարան» Գր. Օշականցին նվիրում է իր հայրենի գավառում անմոռաց հիշատակ թողած Մեսրոպ Մաշտոցին, նշելով այն մեծ ու բարերար ազդեցությունը, որ թողել են նրա անունն ու գործը իր ստեղծագործական մտքի, իր կյանքի ու ուշխատանքի վրա։ «Առ երջանիկ սուրբ հայրն մեր Մեսրոպ թարգմանիչ»,— վերնագրում է նա իր խոսքը՝ «Բ սկզբան շարադրութեանս ազդեցեալ ի գերսահրաշ մեծ իմաստնուցն, որ ասէ՝ իմաստութիւն է ճանաչել թէ յումմէ՛ շնորհն ի դէպ, է՛ ինձ ճանաչել զիմ շնորհատուն ըզբարեպաշտութեան յարացոյցն զլուսայարփ պատկերն, զպատուելալն ի հրեշտակաց, զբարերանելալն համայն լեզուէ և զսքանչելի տիպ Մովսիսեան զսուրբն Մեսրոպ Եւ զայսոսիկ երկս իմոց վաստակոց, իրրն զպտուղ նախախաջծ... քեզ տեսնէգրեալ զայսոսիկ, ո՛վ սուրբդ աստուծոյ, ի քոյ անուն աշխատեցայց ինձ ուղեկից յայսմ ճանապարհորդութեան, խօսեալ յականջրս ծառայի քո զօգտակարն և զպիտանին, մատակարարեալ՝ ինձ զգինին ուրախարար՝ արբեցուցանելով ի քո իմաստորս և զօրացո՛ղիս բնթացս անապարհիս սոյսորիկ»¹³։

Այս առաջարանն ինքնին խոսում է Գր. Օշականցու ստեղծագործական մտորումների, ներքին տրամադրությունների մասին։ Սրա հետ մեկտեղ նաև նրա ժամանակակցի՝ կենսագրի և զրչակցի՝ Հովհ. Կարենցու մեծարանքի խոսքերը ընթերցողի մեջ կանխապես ստեղծում են հետաքրքրություն Գր. Օշականցու անվան և նրա թողած գրական ժառանգության նկատմամբ։ «...Յօրինի՛զ զեղեցիկ երգոց և տաղից,— գրում է Հովհ. Կարենցին,— շարադրող իմաստա-

¹¹ «Արևադան» 1888, էջ 21։ Ե. ք. Աղանյանցին ծանոթ ձեռագիրը Երևանի Մատենադարանի այժմյան N 6682 ձեռագիրն է։

¹² Շ. Ոսկյան, Գրիգոր արքեպիսկոպոս Օշականցի. «Հանդես ամսօրյա», 1964, № 1—3, էջ 7—28, № 4—6, էջ 142—154։

¹³ Մատենադարան, ձեռ. N 6682, թերթ 2ա։

լից ոտանաւորաց, վասն որոյ կարելի է և չէ յանդգնութիւն ասել նմա նորահայտ Շնորհալի և Կոչել զնա երկրորդ նարեկացի»¹⁴։

Իրոք, Գր. Օշականցին ունի բոլորն տարերքով ստեղծված հաջող երգեր։ Նրա այդ երգերի արվեստը անկեղծ է, պարզ և զգացմունքալից։ Գր. Օշականցին մեկն է միջնադարից ղեպի նոր շրջանը անցնող այն բազմաթիվ երգիչներից, որոնց ստեղծագործությունը մի քայլ առաջ է ղեպի ժողովրդի կյանքը։ Որոնց երգերը, քիչ թե շատ, բերում են նոր հովեր։ Հայտնի է, որ հայ նոր դրականության, նոր որակի բանաստեղծության զարգացման առաջին ծիւերը բերում է նաղաշ Հովնաթանը՝ XVII դարի երկրորդ կեսում։ Նրա զրիշը քնարական արվեստի նոր ձևերով բազմակողմանիորեն արտահայտում է ժողովրդական խավերի կյանքը, կենցաղը։ Նրան հաջորդում են Պաղտասար Դպիրը և Պետրոս Ղափանցին, որոնք ստեղծում են տեղական բարբառների և օտար լեզուների ազդեցություններից ազատ, զրաբարյան ծանրամարս ձևերից հեռու, ժամանակակից դրական հայերենով քնարական ղեղեցիկ երգեր։ Պաղտասար Դպիրը, մարդկային հոգու բարձր զգացմունքները երգելու հետ միասին, իր քնարով մերկացնում էր նաև հասարակական կյանքի անարդարությունները։ Բողի ապականիչ ղերը։ Պետրոս Ղափանցին վարդի և սոխակի իր ղողտրիկ երգերով մարմնավորում է հայ ժողովրդի ազատասիրական ձգտումները՝ առաջինը ստեղծելով ազգային-քաղաքական բովանդակությամբ քնարական երգերի մի որոշակի շարք։ Սրանց հետևորդներն են Գր. Օշականցու, Հովհ. Կարնեցու նման շատ երգիչներ, որոնցից յուրաքանչյուրը քնարական երգի մի նոր շեշտով, բանաստեղծության մի նոր նյութով ու տեսակով հարստացնում յրացնում է ժամանակակից անհատական քնարերգությունը։

Ամենից ուշադրամ է այն է, որ Գր. Օշականցու որոշ երգերի վրա նկատում ենք իր հայրենի երկրի կյանքի կնիքը, Արարատյան բնաշխարհի, նահապետական հայ գյուղի աշխատանքային առօրյայի արտացոլքը՝ այս կամ այն չափով։ Գր. Օշականցին երգում է բնությունը ոչ թե ընդհանրապես, վերացական ձևով, ինչպես երգում են միջնադարի մեր երգիչները, այլ իր միջավայրի հարազատ կենդանի բնությունը, բնությունը որոշյալ առումով։ Այլ խոսքով ասած՝ XVIII դարի անհատական բանաստեղծության մեջ, Գր. Օշականցին բերում է բնության և աշխատանքային երգերի որոշ նմուշներ, որպիսիք մենք ունենք հայ ժողովրդական երգերի, խաղերի ու տաղերի, հայերենների մեջ. սա Գր. Օշականցու քնարի ամենամեծ արժանիքն է։ «Տաղ ուրախութեան ողբալ նորին Գրիգորի ու եղանակ դարնան», «Տաղ ղուարճալի սասցեալ նորին Գրիգորի առ եղանակ ամարան», «Տաղ սիրոյ ողբալ նորին Գրիգորի առ եղանակ աշնան», «Տաղ աղետական երգով սասցեալ նորին Գրիգորի առ եղանակ ձմերան» - սրանք տարվա շրջա եղանակներին նվիրված մեր առաջին բանաստեղծություններն են, բնության առաջին քառաերգը, որ ստեղծել է Գր. Օշականցին։ Նրա այդ երգերում տեղ են գտել հողը, հանդը, դաշտն ու այգին, հասկը, հունձը կալն ու կալսը, ղերանդին, եզը, սայլը, երկրագործն ու մշակը, հայրենի աշխարհի կենդանի բնապատկերները՝ նոր հույզ, նոր զգացմունք բերելով իրենց հետ։ Ահա Արարատյան աշխարհի ամառը. ղերանդիներով ղինված հողի մշակները եկել են ցորենի սպիտակին տվող հասուն արտերը հնձելու։ Հայ շինա

¹⁴ Նույն տեղում, Սերթ 65ր։

կտնը տեսնում է իր քրտնաթոր աշխատանքի արդյունքը. նա ստանում է իր արդար, ազնիվ աշխատանքի վաստակը.

Վեստասիկ վարձք մշտկաց,
 Եւ երկք քրտանց երկրագործաց
 Եւ տոհմական անդաստանաց,
 Լցաւ յաշխարհ համատարած:

Յնծան այսօր ազգ և աղինք,
 Ի դալարոյ իրք գառինք,
 Չի ուռնացան դաշտ և լեռինք
 Յորոյ վերայ զողեաց երկինք:

Պերանդսզէն համայն եղևալ,
 Մշակք անդոց գան ժողովևալ,
 Չի արտորայք սպիտակևալ,
 Կան տանդիս ի հունձս հասևալ¹⁵:

Բազմատեսակ և բազմարդյուն է Արարատյան երկրի ժողովրդի զբաղմունքը. այգեգործությունը, տեսակ-տեսակ պտղատու ծառաստանները, ջրարբի պարտեզները նույնպես աշխատանքային ցնծությամբ են լցնում նրանց սրտերը և իրենց բերքով իմաստավորում են հայ շինականի կյանքը.

Լրումն ահա հորամանին՝
 Թէ ի յերկրէ լոյսք բլսեցին,
 Մազկևալ պտղովք զարդարեցին
 Եւ ըստ սզգի՝ սերմն ի նոսին:

Իունակ-դունակ զարմանաւոր,
 Ոմն ունելով հարիւրաւոր,
 Եւ այլ ոմն վարսունաւոր,
 Եւ այլ ոմն երեսնաւոր¹⁶,

Ուր մշակեն զայլիս քրտամբք,
 Եւ ջրարբի պարտէջ երկամբք,
 Իարձևալ ի տուն ռսրձևալ ռեսսամբք,
 Ոմանք իշով, ոմանք եղամբք:

Ուրախաձայն, թեթևաշունչ են իր. Սշականցու դարնան և ամուսն եղանակ-ներին նվիրված երգերը. դրանցից զգացվում է հայ նահապետական գյուղի կյանքի բուրմունքը, անմեղ, անարատ աշխատավոր մարդկանց, զեղչկական կենցաղի շունչը: Մարդն ու բնությունը այս երգերում հանդես են գալիս միասնությամբ, բնության համայնապարփակ զարթոնքի հետ սկսվում է նաև մարդկային կյանքի զարթոնքը. բնությունը, զարուներ հազար ու մի թովչանքով, իրենց գիրկը բացած դաշտ ու այգի են հրավիրում հողի մշակներին:

Արի՛ք եղբար՛ք Ելցուք այսօր յայգեստա՛ն, յայգեստա՛ն,
 Ահա երդէ տատրակն ազնիւ քաղցրածա՛յն, քաղցրածա՛յն,
 Կանաչազեղ զսրգաւեցաւ անդաստա՛ն, անդաստա՛ն,
 Յի՛ն և կոունկն եղանակեն մեծածա՛յն, մեծածա՛յն,
 Արի՛ք եղբար՛ք Ելցուք այսօր յայգեստա՛ն, յայգեստա՛ն:

¹⁵ ՉԼԼ. N° 7672. Թերթ 11ա—բ:

¹⁶ Նույն տեղում:

Ուրախ-ուրախ պիւպիւլն անդրէն ձայն առնէ՝, ձայն առնէ՝,
 Վասն վարդին խանդակաքեսոյ հարցանէ՝, հարցանէ՝,
 Ձարտութեան արտգամաւոր առաքէ՝, առաքէ՝,
 Ձգումբին առեալ պաշտօնատար կանչ առնէ՝, կանչ առնէ՝,
 Արի՛ք եղբարք ելգո՛ւք այսօր յայգեստան, յայգեստան¹⁷,

Այսպես ուրախ, կենսախիւղ շէն, սակայն, Գր. Օշականցու աշնան և ձմռան հրգերը. դրանցում բանաստեղծը թախծաշունչ եղանակով հիմնավորում է այն նայացքը, թե մարդկային հոգին տննչում է հարատև դարնան և մահան, և ոչ հրբեր աշնան և ձմռան. ուստի բնության մայրամուտը, վախճանը ազդարարող երևույթները երգիչն ընկալում է խոր սարսափով, ծանր թախիծով. դրանց մէջ բանաստեղծը տեսնում է մարդկային կյանքի անհրապույր, մռայլ կողմերը. Աշուն է, լեռնային զորեղ քամին փչում է, ծառերը խորշակահար են լինում, թռչնում, մերկանում, երբեմնի սաղարթախիտ, պտղաբեր ծառերը տնքում են դաժից, բբաբեր քամին քշում, տանում է նրանց դեղնադուլն տերևները, խաղողի ազնիվ որթը ողբում է, վարդենին տերեւաթափ է լինում. բանաստեղծը սգում է նրանց մահը, տննչում նրանց վերակենդանացումը.

Ձօռեղ փչումն ուժգին հողմոյ.
 Իկն ի լեւանցն հիւսիսոյ,
 Հարան համայն ծառք ի տապոյ
 Ո՛հ, իցէ՛ արդեօք, ո՛հ, իցէ՛ արդեօք
 Մաղկեալ սոցա վերստին:

Ուրախաբար օրքն ազնիւ.
 Ի սուգ նստեալ ողբու ձայնիւ.
 —Տարան, ասէ, դիմին կարմիր.
 Ո՛հ, իցէ՛ արդեօք, ո՛հ, իցէ՛ արդեօք
 Մաղկիլ սոցա վերստին¹⁸:

Անբավական է բանաստեղծը, բնության աշունը հեղ է նրա սրտին. նա մազել նրա էությունը, դարձրել նրան երազկոտ, մտաղբաղ.

Ի իծեալ սիրտ իմ ի յիս ճալի
 Առ խնձորին յոյժ նուաղի.
 Զի դեղեցիկն այն շերեի.
 Ո՛հ, իցէ՛ արդեօք, ո՛հ, իցէ՛ արդեօք
 Մաղկիլ սոցա վերստին¹⁹:

Երգիչը Արարատյան աշխարհի հարազատ բնապատկերների մեջ անձնավորում է հասարակական, քննադատական ու տրամադրություններ, մարդկային խոհ: Ժամանակ է ծանրաշունչ ձմեռը. ծաղկալից խաթաճանքի վայրերը ձյունածածկվել են, ծառերն ու բույսերը ցրտից խամրել ու այրվել. բույսերն են և առապարներն ու հովիտները, սառցակալել, պապանձվել են աղբյուրներն ու գետերը: Գեղեցիկ Արազածը ծածկել է իր դեմքը մառախուղի անթափանց քողով, նրա շուրջը գտնվող մանր լեռներն ու սարերը, որ պատսպարվում էին նրանով, նայում են Արազածին՝ թախծալից դեմքով.

¹⁷ Նույն տեղում, թերթ 10ա:

¹⁸ Նույն տեղում, թերթ 12ա:

¹⁹ Նույն տեղում:

Բախճանական վայրի մեռ ամեն ծաղկալից,
Տեսանի առանիկ համայն ձինալից,
Առապարհ և հովիտ սաստիկ բխլից,
Սարսափամար սասանի անձն իմ վտաղեալ:

Գեղեցիկ Արագած, ծաղկափայլ լեռին,
Երեսն ուղեցեալ ձառկուրի ձառկին,
Շուրջանակի անձամբ մառախուղ ձղին,
Սարսափամար սասանի անձն իմ վտաղեալ²⁰

*Մասիսը՝ լեռների ղերադուռն թաղուհին, ծածկվել է ձյունով: Նրա կողքին
նստած է համանուն, հարազատ փոքր Մասիսը և կրկին ողբում է, սգում...*

Գերադուռն, պանծալի լեռնեց բազումին,
Նստաբան և տեղի նոյան տապանին,
Իրերի ձինազվեաց յո՛յժ ամենեկին,
Սարսափամար սասանի անձն իմ վտաղեալ:

Ողորմիկի դիմօք նստեալ հարն նորին,
Համանուն, հարազատ նորա սիրելին,
Հեծեալ ի նայ ողբայ իրեր տրամադին,
Սարսափամար սասանի անձն իմ վտաղեալ:

*Այնպես ծովում է երգիչը, ներքին, խոր, անհանգստություն է ապրում. բթա
շունչ ձմեռը բախում է նրա սիրտը, լցնում նրա հոգին ծանր նախազգացում
ներով. նա հուսահատ դիմում է աստծուն՝ կրկին դարուն պարզելու մարդ
կանց...*

Գոչումն ձինաբեր, հողմուն անպին,
Բախելով բեկանեղ զսիրտ իմ ցաւալին,
Դուռնակում գտաղեալ աւուրն անեղին,
Սարսափամար սասանի անձն իմ վտաղեալ²¹:

²⁰ Գր. Օշականցու այդ երգերում ուժեղ է անձնական հոգեկան տրամադրու-
թյունների շեշտը, զգացմունքայնությունը. դա անխառն քնարական երգի բնու-
թոշ դիժն է, XVIII դարի հայ քնարերգության էական հատկանիշներից մեկը:
Այս գիժն ահա ցայտուն է նաև Գր. Օշականցու պանդխտության երգերում
Հայտնի է, որ այդ թեման շատ է արտահայտվել մեր անցյալի բանաստեղծու-
թյան մեջ: Գր. Օշականցու մզտ, սակայն, այն մի այլ դրսևորում է ստացել:
«Տաղ սիրոյ, ասացեալ նորին Գրիգորի ի զէմս ազգային բարեկամի և բնտա-
նեաց՝ յանձանօթ աշխարհ հեռուցելոց», «Նորին Գրիգորի դարձեալ վասն սի-
րոյ ասացեալ յօտար յերկիր պանդխտացելոց անձին առ ազնուացեալ բարե-
կամ իւր հեռաւոր», «Նորին Գրիգորի վասն սիրոյ, որ հայի ի զէմ հեռաւոր սի-
րելեաց և կորուսեալ բարեկամաց» և այլ բնահանուր վերնադրերի տակ Գր.
Օշականցին հյուսել է քնարական բանաստեղծութիւններ, որոնցով անդրա-
դառնում է ոչ թե հայ պանդուխտի վիճակին բնահանրապես, այլ մարմնավո-
րում է նրա անձնական, հոգեկան զգացմունքները: Այլ խոսքով ասած, դրանք
պանդուխտի սիրո երգեր են:

²⁰ Նույն տեղում, Թերթ 12ր:

²¹ Նույն տեղում. Թերթ 12ր—13ա:

Եւտիւ հաւայ յանկարծակի.

Աւա՛ղ, աւա՛ղ,

Ձեռնա քոյին նազելի՛,

Ինչ զալ կամէի:

Բնացք ոտից իմ կազազան.

Աւա՛ղ, աւա՛ղ,

Եւ Ես, ի քէն նազելի,

Յո՛յժ. յո՛յժ հեռացա:

Ինձ բաց ի քէն ո՛չ ոք ունիմ.

Աւա՛ղ, աւա՛ղ,

Ի սէր քոյին նազելի՛,

Տապիմ ե մաշիմ:

Ո՛ւր ե իցեմ, զքե՛զ խորհիմ.

Աւա՛ղ, աւա՛ղ,

Ձինչ որ խօսիմ, նազելի՛,

Նախ ի քեզ հայիմ:

Ի վախճանի զքեզ ոչ գտի.

Աւա՛ղ, աւա՛ղ,

Ուր ե իցես նազելի՛,

Տէր քնդ քեզ լիցի²²,

Այս երգերից յուրաքանչյուրը պանդուխտի սիրո տառապանքների մի պատկեր է. տանջված, հալածված, բարբոթված սրտի և սիրո մի խոսք: Առաջին երգում հայ պանդուխտը հեռանում է իր սիրուհուց կարոտն ու սերը սրբաբույր, հաշտվելով իր վիճակի հետ, տենչալով նազելուն, հավատարիմ նրան. օրհնելով նրան: Երկրորդում պանդուխտի սիրո տառապանքներին դամարվել են օտարության ծանր գոյապայմանները՝ կարիքն ու զրկանքը, ուստի տարագիր սիրահարը ողբում է զօր ու գիշեր, մոնչում է վշտի ցավերից՝ երազելով մի հույս, օգնության մի լույս՝ իր նազելուց.

Դռնե՛մ, ողբա՛մ ե հառաչե՛մ.

Ջօրն ողջոյն, զիշերն ողջոյն.

Ի խոր խոցեալ ազեկիզեմ.

Ի սէր իմոյ սիրելւո՛յն. սիրելւո՛յն

Իրեւ նետիւ վիրաւորեալ.

Կտանամ Ես ի ցաւոյն.

Ո՛հ, ո՛վ փութայր առ անձկալին

Ազգէր. նմա ողբալո՛վ, ողբալո՛վ.

Ո՛հ, ո՛վ փութայր առ սիրելին.

Կոչէր զնա՝ գա՛լ առ իս. գա՛լ առ իս

Բոտեալ ցաւօք վշտաշարշար.

Անկեալ դեմ ի մահնի,

Յօտար երկիր պանդխտական.

Անձն իմ նեղեալ տապտապի՛, տապտապի՛.

Յամենայնի գոյաբափուր, ջրո՛յ անգամ կարօտի

Ո՛հ, ո՛վ փութայր առ նազելին.

Պատմէր զինէն ողբալո՛վ, ողբալո՛վ.

Ո՛հ, ո՛վ փութայր առ սիրելին.

Կոչէր զնա գա՛լ առ իս. գա՛լ առ իս²³.

²² Ձեռ. № 6628, թերթ, 15ր:

²³ Նույն տեղում, թերթ 8ր:

Ծրրորդ երգում օտարական հայի վիշտը բոլորովին այլ կերպարանք ունի. նա շտապել է հասնել իր սիրունուն, նրա հետ լինել, բայց թշնամիները զարկել են նրան ճանապարհին, խափանել իր երթը, ուստի նա աղերսում է իր նազելուն ցույց տալ իր ղեմքը, հագեցնել իր սրտի փափաղը:

Արփափայլ տիսս զեղեցիկ,
Իմ նազելի պայծառ հափկ,
Վարդակալների աստեղեկ ֆազեցիկ
Երևեցո՛ւ երեսս բոյ, որ փափառիմ:

Նախանձաւոր հար յշնամին,
Ի փութանայն իմ զհետ բոյին.
Իհար զիս ի նաւապարհին,
Երևեցո՛ւ երեսս բոյ, որ մեռանիմ²⁴:

Թե՛ բնության և թե՛ պանդխտության երգերը իրենց անմիջական իմաստի հետ միասին ունեն նաև մի ներքին շեշտ, որը թաքցնում է իր մեջ մի այլ ավելի վեհ զգացմունք—դա հայրենասիրությունն է: Այդ զգացմունքը, ահա, հնչում արտահայտություն է ստացել Անիին նվիրված ողբում: Եթե բնության երգերում այդ սերը արտահայտություն էր գտնում հայրենի երկրի հողի, ջրի, այգու և անդաստանի, երկրագործի աշխատանքի միջոցով, եթե պանդխտության երգերում նույն այդ զգացմունքը զրսերովում է օտար բռնակալների հալածանքների պատճառով բնավեր եղած հայի սիրո տառապանքների միջոցով, ապա ի ղեմս Անիի նա սկսում է հայրենիքի խափանված բաղաբական կյանքը, աստանդական ժողովրդի վիճակը՝ հիշելով Անիի անցյալ փառքը, նրա կործանման սրտակեղ պատմությունը:

Համայն ազանց զու զովլի
Քաղաք Անի պանծացեալ,
Ասպնջական քաղաւորաց,
Եւ զօրաց անդ մնացեալ:
Իբրեւ այսի լեալ, թողեալ,
Կոխան ոտից բեկեցեալ,
Ինակիչք բոյ յաշխարհ օտար հեռացեալ,
Աւա՛ղ, աւա՛ղ, տաւաղիւր, ո՛հ:

Այս անդամ ահա, պատմողական-նկարագրական եղանակով, Գր. Օշականցին բնութագրողին մտովին տանում է հեռավոր անցյալը և նրա առջև վերականգնականացնում փառաշուք Անիին և նրա կործանման սրտակեղ պատկերները:

Կանգնեալ պառուարս և նետակալս
Հանդիւս բո, այնք մութս եղին.
Չզեղեցիկ և զբարձրաբերծ
Պարիսպ բոյսկ փլուցին.
Չհօյակապ և զգմբարաց
Կերտուածք բոյին բեկեցին...

Ոտաւածայն զոչին զօրաց
Խուժաղուժ մինչ բարձրացան,
Յոյժ զուսանաց և նուազաց

Որդուց քոց ի սուս դառնան.
 Եւ օրհնութիւնք ժամերգութեանց
 Յեկեղեցայց լուցանեմք:

Ուշագրաւ է այս ողբը նաեւ ստեղծվելու իր հուզիչ շարժառիթով. ինչպես վերևում նշվեց, Գր. Օշականցին շրջում է Անիի ավերակները, նորից ու նորից կանգնում և դիտում երբեմնի հռչակալ, շքեղ ապարանքի կանգուն բեկորները, նորից նայում շուրջը, մտաբերում նրա տխուր անցյալը և դառնացած սրտով ու արտասուքը աչքերին գրում է այս բանաստեղծությունը: Ընդհանրապես Գր. Օշականցու երգերը ինքնակենսագրական գծեր ունեն իրենց մեջ: Անշուշտ ծանր հիվանդության պահին, կամ մահվան անկողնում է նա գրել իր «Նորին Իրիզորի աղերս առ աստուած ի դիմաց հոգևոր հիանդի» բանաստեղծությունը: Խնկ և այս երգը կրոնական լիակատար երանգ ունի, բանաստեղծը հաշտվում է մահվան հետ հավատացյալի մտապատրանքով, սակայն դա մահվան դեմ, մահվան վերաբերյալ մահամենքի սրտառուչ, խոր ու քնքշազին երգերից մեկն է: Բանաստեղծի բողոքը մահվան դեմ այնքան բուռն է, նրա մեջ կենսասիրության կայծը այնքան ուժգին, որ գրեթե չեզոքացնում են նրա զղջման ու համատեղության, հոգու հավերժության մասին եղած բոլոր մրմունջների ազդեցությունը:

Որհաս մահուն յանկարծակի ինձ հասեալ.
 Անձն իմ զողայ և սարսափի զարհուրեալ.
 Աւաղ հեկոյս, որ ի մահնի եամ անկեալ.
 Եւ ի դուռն, զսուռն մահու ժամանեալ:

Կական բարձեալ աղաղակեմ ցաւազին.
 Առ մեռաւայս և ընտանիս լալազին.
 Իսկ ի թիկունս, ինձ օգնութիւն մաբասցին.
 Ուայց յայցցանէ ո՞ր ոք աստէն զըտանի՞ն²⁵:

Միայն դարնան և ամռան երգերի նյութն ու զաղափարն էր, որ ուրախության, վայելչանքի լարեր էր տվել Գր. Օշականցու երիտասարդ քնարին: Իսկ այնուհետև միշտ թախծոտ է նրա քնարի ձայնը. տխուր է բանաստեղծը, երբեմն նաև հուսահատ: Այս հուսահատությունը, սակայն, բխում է նրա կենսասիրությունից: Նա սիրում է կյանքը ու սարսափում, զարհուրում է մահից, բայց և տեսնելով կյանքի հոգի կողմերը, երբեմն էլ հանգում է ծայրահեղ հուսահատության: Այսպիսի դեպքերում, ահա, նա իր երոնա-իմացական, դատողական քննության տակ է առնում «կյանք և աշխարհ» հասկացողությունները և «ունայնություն ունայնությանց» համարում ամեն ինչ:

Գեղջկական, անմեղ, անարատ կյանքի հրապույրը զգացող երգիչը, հայրենի բնության տխրությունը մերժող, նրա գեղեցկություններով ողբշնչված տաղասացը, միաժամանակ, ժխտում է կյանքը, անիմաստ, դատարկ ու փուլ: Համարում նրա վայելչանքները: Այս բանաստեղծությունը նա վերնագրում է «Ողբ... վասն ունայնութեան աշխարհի և եղձական փառաց և վայելչութեան. ձայնեալ առ ամէնայն հասակ» — սա անշուշտ աշխարհի մերժելու, հանդերձյալ կյանքին նախապատվություն տալու քրիստոնեական զաղափարախոսության ազդեցությունն է, սակայն ոչ միայն այդ, այլ նաև քննադատություն

²⁵ Նույն տեղում, թերթ 11ր:

²⁶ Նույն տեղում, թերթ 10ա:

երգչի համար սիրելի մարդկային կյանքի նկատմամբ, այն կյանքի, որի ընթացքի և պայքարի մեջ նա չի տեսնում ոչ մի օրինաչափություն, այլ տեսնում է կեղծիք ու անարդարություններ: Շարունակության մեջ բանաստեղծը փառք, պատիվ, խիսանություն, զանձ, հարստություն, ամեն ինչ դատարկ ու փուլ է համարում այն պատճառով, որ նախ դրանք անցողիկ են և ապա՝ որովհետև դրանց մարդիկ հասնում են կույր բախտի, դիպվածի, պատահականության պատճառով:

Ընեսկուն դիւրադանց աշխարհ սուղ ճամբւաց.

Ա՛յ զոյ իմաստնաց հաց, ո՛չ հաճեսուրեղաց..

Ա՛յ բերացք բերեաց, և ո՛չ մարտ զօրաց..

Քանզի զիպուածք բախտի են հասարակաց.

նուայնութիւն ունայնութեանց, ամեսայն ինչ բնզ ունայն:

Ի յայս սուտ կենցաղոյս անձն իմ ձանձրացաւ..

Ի մորզելոյզ Լորարց՝ Լարի տաղտկացաւ..

Ի շուգմեզ բեկերաց յոյժ վտանգեցաւ...

Քարոզեաց ժողովօղն՝²⁷ ունայնութիւն ունայնութեանց...²⁸:

Գր. Օշականցու քնարը կրում է Պաղտասար Դպրի անմիջական ազդեցությունը: Այդ ազդեցությունը նկատվում է որոշ երգերի և՛ արվեստի, և՛ բովանդակության վրա: Ընդհանրություններ կան նրանց բանաստեղծությունների կերտվածքի, տների, կրկնականների ձևերի և տաղաչափության միջև, առանձին բանաստեղծություններ նման են նաև նյութով և զաղափարական բովանդակությամբ: Այսպես օրինակ, Գր. Օշականցու վերջին երգը շատ հարազատ է Պաղտասար Դպրի հետևյալ բանաստեղծությանը.

Ի կիսստ սիրելեաց, անհաւատամաց,

Ի սուտ այս կենցաղոյս ձանձրացաւ անձն իմ.

Յանստոյզ բեկերաց, լոկ բանի Լորարց,

Յիրաի, բնաիւն տաղկտացաւ անձն իմ²⁹:

Նույն անձնական դժգոհությունը՝ հասարակական հիմքով, նույն քննադատական, հուսահատական հայացքը աշխարհի նկատմամբ.

Մեծ Աղեխանց, որ զաշխարհս խոնարհեցոյց.

Խէ՛՛ ո՛ւր են զանձք քո՝ ոմբն նրմա հարցոյց.

Ուր էին շուրջ զիրե՛՛ր թղոսա Լցոյց.

Յորոյ պատասխանի զուարեացաւ անձն իմ:

Գր. Օշականցին իր «Գոչեմ, ողբամ և հառաչեմ...» սկսվածքով երգը գրել է Պաղտասար Դպրի «Ձիւ ք տ սիրոյն ու յաղելի...» հայտնի տաղի ազդեցությամբ և նրա ևղանակով, «Արփիափայլ տիւյ զեղեցիկ...»-ը թե՛ աննման յոյժ գովելի...»-ի ևղանակով և այլն: Գր. Օշականցու կրկնականներ որոշ տողեր նույնպես հիշեցնում են Պաղտասար Դպրին: Այս բոլորը, սակայն, ստվեր չեն նետում Դր. Օշականցու բանաստեղծական կերպարի վրա: Պաղտասար Դպրի բարերար ազդեցության տակ երիտասարդ, շնորհալի տաղասաց Գր. Օշական-

²⁷ Ձև. № 6682, թերթ 11ա:

²⁸ Սողոմոն Իմաստունի գրքերից մեկն է «Ժողովողն»՝ հին կտակարանի մասերից:

²⁹ Պաղտասար Դպրի, Տաղիկներ սիրոյ և կարօտանաց, Երևան, 1959, էջ 131:

դին պահպանել է իր ինքնուրույնությունը և, ինչպես տեսանք, նյութով և արվեստով նոր ու թարմ երգեր է գրել: Պարզ, հուզաթաթախ խոսք, զգացմունքների արտահայտության մեջ ներդաշնակություն, խոսքի երաժշտական շնչավորում—գրանք են Գր. Օշականցու վերահիշյալ երգերի արվեստի առանձնահատկությունները: Իրանց հետ միասին և տողերի ճկուն, ներդաշն անդամատումը, շեշտահարուստ տների դուրաբեկ կրկնակների առկայությունը հմայք են տալիս նրա առանձին երգերին: Այսպիսի դեպքում վերացական զաղափարն իսկ շոշափելի է դառնում. ահա, օրինակ, «նորին Գրիգորի դարձեալ վասն սիրոյ ի խաչեալն և ի կոյսն սուրբ, սասցեալ ի դէմս վարդին և լուսնիակին» երգը, որ անցյալում ստեղծված վարդի և սոխակի կրոնական այլաբանական ամենահաջող երգերից մեկն է՝ ճկուն, նրբակառույց տողերով ու կրկնակներով, հմայիչ, թեթև, շոյող երաժշտությամբ:

Ի ցոլանալ շող արևուն՝

Ջարբեալ պիւլպիւլն ի նոյն ժամուն, աւա՛ղ,

Հանգիւ վարդին կայր ի կանգուն,

Անբարբ ա՛տ առ նա հայլէր, աւա՛ղ հայլէր,

Եւ մի՛ առ մի քովսն նայլէր, նայլէ՛ր, նայլէ՛ր:

Գեղածիժաղ կոկոն վարդին,

Էր քաղուցեալ ի մէջ րփին, աւա՛ղ,

Շրջազիտեալ լուսնիակին՝

Կարծէր թէ անդ վարդն ոչ էր, աւա՛ղ, ո՛չ էր,

Եւ ողբս առեալ ձայնիս զոչլէր, զոչլէ՛ր, զոչլէ՛ր:

Գնայր նեպով ի մէջ տնկոյն

Եւ աղբւսէր սէրս քրփոյն, աւա՛ղ,

Խի՛նչ կարողին շաւիւր զնոյն,

Ի տերեաց ցօղն շաղէր, աւա՛ղ, շաղէր,

Լուսնիակին հոգին փաղէր, փաղէ՛ր, փաղէ՛ր³⁰,

Մենք ավելորդ ենք համարում անդրադառնալ Գր. Օշականցու մյուս տաղերին, որոնք գերազանցապես կրոնական բնույթի են և իրենց արվեստով նոր բան չեն ավելացնում եղածի վրա: Հիշատակության արժանի են «Արձանագրութիւնք յիշատակաց» ոտանավորները՝ որպէս տեղագրական, հնագիտական աղբյուրներ և որպէս բանաստեղծի կյանքի և գործունեության հետ կապված վավերագրեր: Գրական այդ հուշարձանները ցույց են տալիս, թե Գր. Օշականցին Արևմտյան Հայաստանում կատարած իր պտույտների ժամանակ ե՛րբ, ո՛ր գավառում, ո՛ր քաղաքում է եղել, ո՛ր եկեղեցին է այցելել և որտեղ, ինչ արձանագրություն է թողել: Այդ արձանագրությունների մեջ կան նաև ազգագրական որոշ նյութեր՝ կապված հայ եկեղեցու պատմության ու կրոնական ներքին պայքարի հետ:

Հետաքրքիր են նաև Գր. Օշականցու «Տեսիլները»: Դրանք իրենց կերտվածքով սեղմ, փոքրիկ, ավարտուն գրույցներ են, յուրօրինակ պատմվածքներ, որոնք խոսում են Գր. Օշականցու գրական ճաշակի ու ձիրքի մասին նաև առձուկի բաժնում: Վիպական-նկարագրական բնույթով, կրոնական ու աշխարհիկ բովանդակությամբ, պարզ լեզվով ու գեղեցիկ ոճով այս «Տեսիլները» վերա-

30 Ձեռ. N° 6682, թերթ 7ա:

ցական ստեղծագործություններ չեն, այլ գրողի ևրեակայության, գեղարվեստական պատկերացումների ուժի չափանիշը, իրականության հետ ամուրկապված հավատացյալ գրողի մտահղացումների արգասիքը: Եթե Գր. Օշականցին գրանք չկոչեր «Տեսիլներ», այլ յուրաքանչյուրի բովանդակությանը համապատասխան վերնագրեր ստեղծեր, ապա մենք, առանց վերապահության, գրանք կդիտեինք որպես գրական ևրկեր ու կգնահատեինք ըստ այնմ: Մի որոշակի գաղափար տալու համար այդ ևրկերի արվեստի, կառուցվածքի, լեզվի, ոճի և գրական այլ առանձնահատկությունների մասին, մենք նպատակահարմար ենք գտնում մեջ բերել նրանցից մեկի՝ ևրրորդ «Տեսիլ» բնագիրը. — «Ես Կրիզոս վարդապետ, որ ՌՄԽ ամի թուականության հայոց, ի սեպտեմբեր Ըյոթներորդում աուր նաւասարդի, ի գիշերի գոլով իմ մտախոհ՝ վասն իրադինչ, ազգեաց ինձ ոմն և ասէ՝—Վարդապետ ոմն խնդրեաց յաշակէրտէն ջուր, և նորա մտեալ սենեակն յամեաց:

Գնացեալ վարդապետին առ պատուհան տանն և հայեցեալ ընդ այն ի ներքս, տեսանէ՝ զի ըմպէր աշակերտն զջուրն: Իսկ բարեփառ վարդապետն զի մի՛ յամօթ կրեսցէ պատանեակն, ոչ յայտնեաց զինքն, այլ յետս կացեալ ի պատուհանէն դարձաւ ի տեղի՝ իւր: Եւ զի ոչ ունէր պատանին մտերմութիւն և սէր վարդապետն, իբրև ըմպէր զջուրն մոռանայր ամենևին զհրաման նորին, և դառնայր առ նա՝ ունայն: Ուստի հարցանէ վարդապետն վասն ջրոյն. Ի՛ նորա ի միտս եկեալ, փութացաւ դարձեալ ի սենեակն անդ բերել ջուր, և յամեաց նմանապէս: Ելեալ միւս անգամ վարդապետն և հայեցեալ ընդ պատուհանն տեսանէ՝ զի առեալ պատանին զգոյլն ի ձեռին և ըմպէր ընդ առաջնոյն, չրդիտելով թէ առ ի՛նչ պէտս եմուտ միւս անգամ ի սենեակ անդ: Իսկ այրն՝ հեղանձնեայ, տեսանելով զայն յոյժ տրտմեցաւ ի վերայ անմտութեան պատանւոյն և կարի իսկ խոցեցաւ ի սիրտ և ի յոգի վասն նորին անհարազատութեան: Բայց զի կամէր սիրով, քան թէ բարկութեամբ խրատել զնա, վասն այնորիկ ոչ ինչ յայտ աբարեսլ, ի բաց եկեաց պատուհանէն, և յետև յետև շողալով եկն զանիւղ ի տեղի իւր: Եւ իբր եկն պատանին դատարկ՝ հեղաբար հայեցեալ ընդ երեսս նորա յիշեցուցանէ նմա զջուրն. և նա ճէպ ընդ ճէպ վազեալ ի սենեակն յամեաց, իբրև զառջինն և զերկրորդն: Ելեալ աուրոյ անգամ վարդապետն և յառեալ ընդ պատուհան ետես, զի ամենևին զանց արարեալ զբանիւ իւրով, զկուծն ջրոյն քամէր իսպառ ի ղոյլն և ըմպէր յորդ-յորդ՝ մինչև սպառէր զջուրն ի ղուլ, անտիւ Ընդ որ յոյժ վարմացեալ վարդապետին և վերստին ի կրունկն դարձեալ յետս եկեաց և նրստաւ ի տեղի իւր. և խորհէր մեծաւ տրտմութեամբ վասն անմտութեան աշակերտին, թե զիա՞րդ ևրիցս անգամ անմիջաց մոռացաւ զհրաման իւր ի մի և ի նոյն պաշտօն, և թէ հի՞մ արդեօք այդպիսի անհարազատութեամբ սիրոյ վայի ընդ ինքեան. նաև թէ քանի՞ առնուլ մուկին ախտիւ ստորացեալ է ընդ կրիւք որկորութեան, որ ի տեսանել զգոյլ ջրոյն, մոռանայ զհրաման ինքին և միանգամայն զահ և ևրկիւղ: Ուստի ի զալ պատանւոյն ևրրորդ անգամ դատարկ, ևհարց ցնա այրն աստուծոյ և փորձելով ասէ,—Ձի՛ է, զի ոչ ևրեր զջուր: Եւ նորա ի միտ բերեալ թէպէտ և զառաջին հրամանսն, բայց զիտելով եթէ ևրիցս ըմպելով սպառեաց զջուրն, ոչ փութացաւ դարձեալ ի սենեակն, այլ յանդուզն բացեալ զերեան իւր ընդդէմ վարդապետին և յաւել զտրտունջն պատասխանի ևտ ցասմամբ և ասէ.—Արդ, քանիցս կրկնես զայդ, ոչ ղոյ ջուր:

նւ զայս իրրև ասաց, տիրեաց նմա ծարաւն յաւիտենական, որ մինչև ցվախճան աւուրց, որչափ և կէաց ի կենդանութեան ջրոյ, երբէ՛ք, ոչ յաղեցաւ»³¹։

Թեև վառ, ստեղծագործական երևակայությամբ և նկարագրական արվեստով՝ ավելի հաջող են Գր. Օշականցու առաջին և երկրորդ տեսիլները (երկրորդը մեր տրամադրության տակ եղած ձևադրում թերի է), սակայն իրական, ճանաչողական նշանակությամբ և աշխարհիկ բովանդակությամբ ավելի զրավիչ է երրորդը։ Իր բնույթով այդ «Տեսիլը» ծառայում է մանկավարժական, դաստիարակչական նպատակների Գր. Օշականցին իր գրույցի առանցքն է դարձրել վարդապետի՝ ուսուցչի և աշակերտի փոխհարաբերության մի պարզ օրինակ, մի դեպք, որը հոգեբանական վերլուծությունների ու քննության նյութ է տվել հեղինակին։ Փորրիկ միջադեպով, գործողությունների սեղմ ոլորտում զծագրվում են երկու կերպարներ՝ իրենց առանձնահատուկ բնավորությամբ — անտարբեր, անփույթ, անպարտաճանաչ, անհնազանդ, անբարեկիրթ, ի մեծ ջոխնաև կուպիտ աշակերտը և հեզարարո, ներողամիտ, բարեսիրտ, ազնիվ ու համբերատար, լայնախոհ ուսուցիչը։ Ինչպես տեսնում ենք, «Տեսիլ» կոչվածը այս դեպքում ինքնին դրական երկ է, XVIII դարի հայ ղեկավարվածության արձակի մի տեսակը, որ կարիք ունի դրականադիտական մանրակրկիտ ուսումնասիրության։ Ընդհանրապես Գր. Օշականցու այս երկի մուտքը, ինչպես և վերջը, հրաշապատում թեթև երանդ ունի, բայց «Տեսիլ» հասկացողությունը այստեղ գրեթե չկա, մոռացված է։ Երկի ներքին էությունը, ոգին, նյութը, ընթացքը, բովանդակության զարգացումը և այլն հիմնականում կապ չունեն տեսիլային երևույթների հետ։ Այստեղ մենք տեսնում ենք մարդկային պարզ փոխհարաբերություններ, կյանքի հետ կապված որոշակի գաղափարներ, իսկ «Տեսիլի» վերջին եզրակացությունը ի վերջո, իր հերթին բխում է կյանքի այդ որոշակի պահանջից։ Չարարարո աշակերտը իր անհնազանդության, անպարկեշտության համար պատժվում է՝ մնալով հավերժ ծարավ. սա արդեն ստեղծագործական մտահղացում է, զրական ձև, դյուտ, որ պատշաճ է համարել օգտագործել Գր. Օշականցին՝ դաստիարակչական նպատակով, քան թե հրաշք, որին կարող էր հավատալ հեղինակը։

Գր. Օշականցու ստեղծագործությունը թույլ է տալիս, որ այսուհետև ընդմիջտ ընդհատվի բանասիրության լուծությունը նրա հիշատակի նկատմամբ և նրա անունը մտնի XVIII դարի հայ բանաստեղծության պատմության մեջ։

31 Նույն տեղում, թերթ 63ր—64ա։

ЖИЗНЬ И ТВОРЧЕСТВО ГРИГОРА ОШАКАНЦИ

III. Л. НАЗАРЯН

(Р е з ю м е)

Григор Ошаканци — один из немногочисленных поэтов Восточной Армении XVIII в. Единственный источник о его жизни и творчестве — это литературные труды его современника, друга по перу, учителя и поэта Ованеса Карнеци.

Ошаканци был одним из видных деятелей Эчмиадзина. В 1795 г. католикос Гукас посылает его в Западную Армению в качестве церковного посланника, где он занимается церковной и благотворительной деятельностью, изучает исторические памятники и пишет свои, проникнутые глубокой печалью, стихотворения. Умер в путешествии в 1799 г., в возрасте 42 лет, похоронен в Карине.

Литературное наследие Григора Ошаканци хотя и скромное, но заслуживает внимания и изучения. До нас дошли его двадцать три стихотворения-дневники и три «видения». Среди них особенно ценны лирические стихотворения и «видения». В них чувствуется глубокая любовь поэта к родной природе: в то же время они отражают жизнь и будни армянской патриархальной деревни. Он впервые создает четверопись природы (посвященную весне, лету, осени и зиме), в которой ощущается жизнелюбие поэта. Другую группу лучших стихотворений составляют страннические песни. В каждой из них — картина чувств и страданий армянина-странника, задушевное слово, идущее от его измученного сердца. В них сильно и патриотическое чувство, особенно проявляющееся в «вопле» поэта, написанном на развалинах Ани.